«ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/6-Կ-ՄԾ

ք. Երևան «09» ապրիլի 2018 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, Մեծ Ծիածան ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Բադալյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

**2.5 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ին:**

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 245339 (Երկու հարյուր քառասունհինգ հազար երեք հարյուր երեսունինը) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 01506515
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 220115140216000

Աշխատակազմի ղեկավար ................................Ա. Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

Մեծ Ծիածան ՍՊԸ
Ք. Երևան Ա.Ավետիսյան 78 բն.3
ՀՎՀՀ՝ 00103837
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500 08878810100

Տնօրեն ................................Ա. Բադալյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը** |
| 3 | 33761000 | Զուգարանի թուղթ 1 | ՀՀ | Գլանափաթեթի լայնությունը 90-110մմ, գլանված թղթի երկարությունը 65մ, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի № 1546-Ն որոշմամբ հաստատված «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:Դուրգարսկի | հատ | 72 | 74448 | 1034 | ք.Բյուրեղավան, Ս.Վարդանյան 47/55 | 1034 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 4 | 39831241 | Օճառ լվացվելու 1 | ՀՀ/ՌԴ | Չորսուների, կտորների և այլ ձևերով, անուշաբույր հոտերով որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար) ոչ պակաս՝ «Էքստրա» տեսակների համար 78 գ, սոդայանյութերի զանգվածային (վերահաշվարկված ըստ Na2O) մասը ոչ ավելի՝ «Էքստրա» տեսակի համար՝ 0,2 %, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ (36-41) °C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով | հատ | 104 | 15600 | 150 | ք.Բյուրեղավան, Ս.Վարդանյան 47/55 | 150 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հաստատված «N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը: Առնվազն 90 գ. Fox/Կրասավչիկ | | | | | | | |
| 6 | 39831244 | Տնտեսական օճառ | ՀՀ/Իրան | Չորսուների տեսքով տնտեսական օճառ, ոչ պակաս 150 գ-ից, որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար)՝ ոչ պակաս 78 գ, սոդայանյութերի զանգվածային մասը (վերահաշվարկված ըստ Na2O)՝ 0,2-ից ոչ ավելի, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ 36-41 0C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, փրփուրի նախնական ծավալը՝ 350 սմ3-ից ոչ պակաս, անվտանգությունը՝ Սան Պին 1.2.681-97 : Barf/Ramis | հատ | 89 | 2670 | 30 | ք.Բյուրեղավան, Ս.Վարդանյան 47/55 | 30 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 8 | 33711320 | Սանր | Չինաստան | Պլաստմասե,նախատեսված մազերի հարդարման համար: Տարբեր գույների, 3-4սմ լայնությամբ, 12-18սմ երկարությամբ, մանր ատամներով: | հատ | 90 | 7200 | 80 | ք.Բյուրեղավան, Ս.Վարդանյան 47/55 | 80 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 13 | 39513200 | Անձեռոցիկ սեղանի | ՀՀ | Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 100 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի": Sakura/Avt | տուփ | 103 | 51500 | 500 | ք.Բյուրեղավան, Ս.Վարդանյան 47/55 | 500 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 14 | 39831271 | Սպունգի սպիրալ | Չինաստան | 14-16 գրամ, ալյումին, նախատեսված կաթսաների և թավաների մաքրման համար: Ճիլոպ | հատ | 58 | 580 | 10 | ք.Բյուրեղավան, Ս.Վարդանյան 47/55 | 10 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | 39831247 | Սանհանգույց ի մաքրման համար հեղուկ | ՀՀ | Զուգարանակոնքի և վաննաների լվացող և մաքրման միջոց, հեռացնում է ժանգը և նստվածքը, հանդիսանում է մանրէասպան և ախտահանիչ միջոց՝ սպիտակի կամ կանաչի, կապույտի կամ այլ գույների բաց երանգներով, օգտագործված հոտավորիչի հոտով, 1%-անոց ջրային լուծույթի pH-ը՝ 2-7, ջրում չլուծվող մնացորդի զանգվածային մասը՝ 70%-ից ոչ պակաս, խոնավությունը՝ 2%-ից ոչ ավելի, մաքրող հատկությունը՝ 85%-ից ոչ պակաս, պետք է լինեն ոչ թունավոր և հրակայուն, փաթեթավորված՝ 750 մլ պոլիմերային կամ այլ տարաներում, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված "Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի": Բրիլաս | լիտր | 455 | 13650 | 30 | ք.Բյուրեղավան, Ս.Վարդանյան 47/55 | 30 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 21 | 39831242 | Լվացքի փոշի ձեռքով լվանալու համար | Իրան | Սպիտակ, բաց դեղնավուն կամ գունավորած հատիկավոր փոշի: Փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը՝ 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված "Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի" համաձայն: Day | կգ | 380 | 11400 | 30 | ք.Բյուրեղավան, Ս.Վարդանյան 47/55 | 30 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 23 | 39836000 | Ավել սենյակի | ՀՀ | Սենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (450-500)գրամ, երկարությունը (85-90)սմ, ավլող մասի լայնքը (35-40)սմ: | հատ | 539 | 10780 | 20 | ք.Բյուրեղավան, Ս.Վարդանյան 47/55 | 20 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 26 | 39831000 | Միջատասպան /կպչուն ժապավեն/ | Չինաստան | Թռչող միջատների վերացման համար՝ ճանճեր, մոծակներ և այլն կպչուն ժապավեն : | հատ | 89 | 445 | 5 | ք.Բյուրեղավան, Ս.Վարդանյան 47/55 | 5 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 27 | 39812220 | Կոշիկի քսուք | Չինաստան | Կոշիկի քսուկ, սպունգով, սև գույնի, բաղադրությունը՝ պարաֆին, մեղրամոմ՝ տեխնիկական, սկիպիդար, նավթամթերք, ներկանյութ: Չափածրարված, առնվազն 50 գր.: | հատ | 184 | 2760 | 15 | ք.Բյուրեղավան, Ս.Վարդանյան 47/55 | 15 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 28 | 33711000 | Ձեռքի կրեմ | Չինաստան/Իրան | Ձեռքերի մաշկի խնամքի համար նախատեսված, փափկեցնող, պաշտպանիչ կրեմ, չափածրարված, առնվազն 200 գր: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված "N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ" սանիտարական կանոնների և նորմերի, Naran | հատ | 258 | 2580 | 10 | ք.Բյուրեղավան, Ս.Վարդանյան 47/55 | 10 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 29 | 39830000 | Լեղակ | ՀՀ | Կապույտ գույնի փոշի՝ մեթիլենային կապույտի հիմքով, լվացքին կապտավուն երանգ հաղորդելու համար, փաթեթավորված համապատասխան 30 գր. Զանգվածով Չինար | հատ | 88 | 1760 | 20 | ք.Բյուրեղավան, Ս.Վարդանյան 47/55 | 20 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 31 | 39812410 | Կահույքի փայլեցման միջոց | Թուրքիա | Փայլեցնող միջոց կահույքի համար, 300մլ աերոզոլային փաթեթվածքով: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N1795-Ն որոշմամբ հաստատված 'Մակերևույթաակտիվ միջոցների և Մակերևույթաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի'Star | հատ | 400 | 4000 | 10 | ք.Բյուրեղավան, Ս.Վարդանյան 47/55 | 10 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 33 | 39221400 | Օճառի աման | Չինաստան | Պատրաստվում է պոլիէթիլենից՝ ապակյա կամ մետաղական, բաղկացած է երկու մասից՝ օճառի տակդիրից և կափարիչից: Օճառի տակդիրը՝ անցքերով: | հատ | 150 | 1500 | 10 | ք.Բյուրեղավան, Ս.Վարդանյան 47/55 | 10 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 34 | 39831282 | Մաքրող կտորներ | Չինաստան/ԱՄԷ | Բամբակյա, Պատրաստի արտադրանքի չափսերը ոչ պակաս, քան 200X200մմ: Dubai | հատ | 89 | 8900 | 100 | ք.Բյուրեղավան, Ս.Վարդանյան 47/55 | 100 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 35 | 33711190 | Փայտիկներ ականջ մաքրելու | Չին աստ ան | Ականջ մաքրող փայտիկներ տուփով, տուփի մեջ 100 հատ: Belux | տու փ | 185 | 925 | 5 | ք.Բյուրեղավ ան, Ս.Վարդանյա ն 47/55 | 5 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 37 | 39812300 | Հատակի փայլ | ՀՀ | Հատակի փայլ, մածուցիկ, սպիտակավուն գույնի, 100գր տարաներով ՊԵԳԱ | հատ | 300 | 3000 | 10 | ք.Բյուրեղավ ան, Ս.Վարդանյա ն 47/55 | 10 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 38 | 33761300 | Ձեռքի թղթե սրբիչներ | ՀՀ/Չ ինա ստա ն | Գլանափաթեթ, ձեռքի թղթե սրբիչներ, երկշերտ, համապատասխան փաթեթավորմամբ: Օլիվիա/Soloro | հատ | 258 | 21930 | 85 | ք.Բյուրեղավ ան, Ս.Վարդանյա ն 47/55 | 85 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| 40 | 33751000 | Տակդիր / 25-40 կգ/ | Թու րքի ա | Տակդիր ճկուն թևիկներով <<մեդիում>> չափսերը 86 սմ*125 սմ /25-40 կգ /, գործվածքը կլանող /6կաթի/ Belux/Windlho sen/Belo | հատ | 249 | 9711 | 39 | ք.Բյուրեղավ ան, Ս.Վարդանյա ն 47/55 | 39 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018 |
| Ընդամենը | | | | | | | 245339 | | | | |

* մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

** Գնման ժամանակացույցում նշված են առավելագույն քանակները: Քանակները կարող են փոփոխվել շահառուների թվաքանակի փոփոխությամբ պայմանավորված:

ԳՆՈՐԴ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*« 09 » ապրիլի 2018 թ. կնքված*
*ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/6-Կ -ՄԾ_ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 3 | 33761000 | Զուգարանի թուղթ 1 | | | | 14889.6 | 22334.4 | 29779.2 | 37224 | 44668.8 | 52113.6 | 59558.4 | 67003.2 | 74448 | 74448 |
| 4 | 39831241 | Օճառ լվացվելու 1 | | | | 3120 | 4680 | 6240 | 7800 | 9360 | 10920 | 12480 | 14040 | 15600 | 15600 |
| 6 | 39831244 | Տնտեսական օճառ | | | | 534 | 801 | 1068 | 1335 | 1602 | 1869 | 2136 | 2403 | 2670 | 2670 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 33711320 | Սանր | | | | 1440 | 2160 | 2880 | 3600 | 4320 | 5040 | 5760 | 6480 | 7200 | 7200 |
| 13 | 39513200 | Անձեռոցիկ սեղանի | | | | 10300 | 15450 | 20600 | 25750 | 30900 | 36050 | 41200 | 46350 | 51500 | 51500 |
| 14 | 39831271 | Սպունգի սպիրալ | | | | 116 | 174 | 232 | 290 | 348 | 406 | 464 | 522 | 580 | 580 |
| 19 | 39831247 | Սանհանգույցի մաքրման համար հեղուկ | | | | 2730 | 4095 | 5460 | 6825 | 8190 | 9555 | 10920 | 12285 | 13650 | 13650 |
| 21 | 39831242 | Լվացքի փոշի ձեռքով լվանալու համար | | | | 2280 | 3420 | 4560 | 5700 | 6840 | 7980 | 9120 | 10260 | 11400 | 11400 |
| 23 | 39836000 | Ավել սենյակի | | | | 2156 | 3234 | 4312 | 5390 | 6468 | 7546 | 8624 | 9702 | 10780 | 10780 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 26 | 39831000 | Միջատասպան /կպչուն ժապավեն/ | | | | 89 | 113.5 | 178 | 222.5 | 267 | 311.5 | 356 | 400.5 | 445 | 445 |
| 27 | 39812220 | Կոշիկի քսուք | | | | 552 | 828 | 1104 | 1380 | 1656 | 1932 | 2208 | 2484 | 2760 | 2760 |
| 28 | 33711000 | Ձեռքի կրեմ | | | | 516 | 774 | 1032 | 1290 | 1548 | 1806 | 2064 | 2322 | 2580 | 2580 |
| 29 | 39830000 | Լեղակ | | | | 352 | 528 | 704 | 880 | 1056 | 1232 | 1408 | 1584 | 1760 | 1760 |
| 31 | 39812410 | Կահույքի փայլեցման միջոց | | | | 800 | 1200 | 1600 | 2000 | 2400 | 2800 | 3200 | 3600 | 4000 | 4000 |
| 33 | 39221400 | Օճառի աման | | | | 300 | 450 | 600 | 750 | 900 | 1050 | 1200 | 1350 | 1500 | 1500 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 34 | 39831282 | Մաքրող կտորներ | | | | 1780 | 2670 | 3560 | 4450 | 5340 | 6230 | 7120 | 8010 | 8900 | 8900 |
| 35 | 33711190 | Փայտիկներ ականջ մաքրելու | | | | 185 | 277.5 | 370 | 462.5 | 555 | 647.5 | 740 | 832.5 | 925 | 925 |
| 37 | 39812300 | Հատակի փայլ | | | | 600 | 900 | 1200 | 1500 | 1800 | 2100 | 2400 | 2700 | 3000 | 3000 |
| 38 | 33761300 | Ձեռքի թղթե սրբիչներ | | | | 4386 | 6579 | 8772 | 10965 | 13158 | 15351 | 17544 | 19737 | 21930 | 21930 |
| 40 | 33751000 | Տակդիր / 25-40 կգ/ | | | | 1942.2 | 2913.3 | 137.11 | 4855.5 | 5826.6 | 6797.7 | 7768.8 | 8739.9 | 9711 | 9711 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ